ԱԿԱԴԵՄԻԿՈՍԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

սության և դիֆերենցիալ հավասարումների տեսության խնդիրներով: Նրա գիտական և մանկավարժական գործունեության հիմնական փուլերից են ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի (1962) և դոկտորի (1977) աստիճանները, այնուհետև պրոֆեսորի կոչումը (1989):

1986 թվին Հ. Ներսեսյանն ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996-ին՝ ակադեմիկոս:

Հանրի Ներսեսյանը ճանաչված մասնագետ է դիֆերենցիալ և ինտեգրալ հավասարումների տեսության, վեյվլետների տեսության և հաշվողական մաթեմատիկայի բնագավառներում: Մասնավորապես, նա ստացել է արժեքավոր արդյունքներ հիպերբոլական տիպի հավասարումների համար Կոշու խնդրի կոռեկտության, սինգուլյար գործակիցներով հավասարումների լուծումների գոյության և միակության, սովորական և մասնական ածանցյալներով հավասարումների արդյունավետ թվային լուծումների վերաբերյալ: Իր գիտական աշխատանքներում նա լայնորեն օգտագործում է ֆունկցիաների տեսության, այդ թվում՝ կոմպլեքս անալիզի մեթոդները:

ազատ պարբերականի ստեղծման ուղղությամբ՝ սերտորեն համագործակցելով այդ բնագավառներում առաջատար հայրենական և արտասահմանյան կազմակերպությունների հետ:

Տարիներ շարունակ Հանրի Ներսեսյանը եղել է ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն՝ իրեն յուրահատուկ եռանդով իր նպաստը բերելով ակադեմիական գրադարանային ֆոնդի համալրման և արդիականացման, ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրման և օգտագործման ուղղությամբ:

Ակադեմիկոս Հանրի Ներսեսյանի գործընկերները և աշակերտները ջերմորեն ու սրտանց շնորհավորում են նրան հրաշալի հոբելյանի առթիվ, ցանկանում են քաջառողջություն, երջանկություն և գիտական նորանոր ձեռքբերումներ:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս
Նորայր ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար